Հավելված N 29
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղարի
2019 թվականի հուլիսի 25 -ի N285 -Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) բարձր տեխնոլոգիաների վարչության (այսուհետ՝ Վարչություն) էկոհամակարգի զարգացման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 24-32.3-Մ2-1)
(1.1.-րդ կետը փոփ. 16.03.20 գլխավոր քարտուղարի հր. 191-Ա)

1.2. Ենթակա և հաշվետու է
Գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:
1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը
Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վազգեն Սարգսյան 3/3

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները

1) իրականացնում է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական ոլորտում գործունեություն իրականացնող միությունների, ասոցիացիաների և ընկերությունների միջև փոխգործելիության մակարդակի բարձրացման, արդյունավետ համագործակցության նպատակով տարբեր միջոցառումների իրականացման աշխատանքները.
2) իրականացնում է ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտում տվյալների կառավարման համապարփակ քաղաքականության մշակում՝ ներառելով այնպիսի խնդիրների կանոնակարգումը ինչպիսիք են՝ վարչական ռեգիստրի վարման աշխատանքների իրականացման, տրամադրվող հավաստագրերի վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման, տվյալների պահպանման աշխատանքների իրականացման, վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ձևաչափերի մշակման և ՀՀ Վիճակարգրական կոմիտե հավաքագրված տվյալների ներկայացման աշխատանքները.
3) իրականացնում է ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտում էկոհամակարգի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման արդյունքների և ազդեցության, մոնիթորինգի և գնահատման աշխատանքերի իրականացումը.
4) իրականացնում է ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտը կարգավորող իրավական ակտերի, նորմատիվ տեխնիկական ակտերի և ստանդարտների բարեփոխման և

արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները.

5) իրականացնում է ստարտափների գաղափարների և գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման, փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման և արտադրական ենթակառուցվածքների ստեղծման շղթայի ամբողջականությանն ուղղված աշխատանքները.
6) իրականացնում է հայկական և արտերկրյա աքսելերատորների միջև կապերի զարգացման խթանման մեխանիզմների ստեղծման աշխատանքները.
7) իրականացնում է ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտին վերաբերող սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակման աշխատանքները:
8) իրականացնում է Հայաստանի բարձր տեխնոլոգիական ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման մեխանիզմների մշակման աշխատանքների իրականացումը.
9) իրականացնում է համաշխարհային տեխնոլոգիական զարգացման միտումները, մոնիթորինգը և նոր տեխնոլոգիաների դեպի հայկական տեխնոլոգիական ոլորտ ներգրավման, ինչպես նաև օրենսդրական և իրավական դաշտերի համահունչ զարգացման աշխատանքները

Իրավունքները՝

1) ստանալ ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտում գործունեություն իրականացնող միությունների, ասոցիացիաների և ընկերություններից տեղեկատվություն.
2) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հավաստագրված կազմակերպություններից պահանջել և ստանալ տեղեկատվական բազայում ներառվող տվյալների վերաբերյալ տեղեկատվություն.
3) ստանալ ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտում էկոհամակարգի ներդրման և զարգացման, տեխնոլոգիական նորարարությունների և գիտատեխնիկական առաջընթացի խթանման քաղաքականության մշակման նպատակով տեղեկատվություն.
4) ստանալ տեղեկատվություն ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտը կարգավորող իրավական ակտերի, նորմատիվ տեխնիկական ակտերի և ստանդարտների վերաբերյալ.
5) ուսումնասիրել ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտը կարգավորող իրավական ակտերը, նորմատիվ տեխնիկական ակտերը և ստանդարտները.
6) ուսումնասիրել բարձր տեխնոլոգիական ոլորտը խթանող էկոհամակարգի զարգացման միջազգային փորձը.
7) բարձր տեխնոլոգիաների ոլորտին առնչվող կազմակերպություններից ստանալ նորարական գաղափարների գեներացման, ստարտափերի ձևավորման և զարգացման էկոհամարգի ստեղծման ծրագրերի մշակման և վերջինիս իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը.
8) տանալ անհրաժեշտ տեղեկատվություն ստարտափների գաղափարների և գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման և իրականացվող փորձակոնստրուկտորական աշխատանքների մասին ամբողջական տեղեկատվություն.
9) ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացմանն ուղղված պետական ծրագրերը, դրանց իրագործման և մոնիթորինգի իրականացման աշխատանքները:
10) ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտը կարգավորող իրավական ակտերի, նորմատիվ տեխնիկական ակտերի և ստանդարտների բարեփոխման և արդյունավետության բարձրացման նպատակով ուսումնասիրել ոլորտում առկա միջազգային փորձը, գործող

իրավական դաշտը.

11) ուսումնասիրել համաշխարհային տեխնոլոգիական զարգացման միտումները և նոր տեխնոլոգիաների դեպի հայկական տեխնոլոգիական ոլորտ ներգրավման հնարավորությունները

Պարտականությունները

1) ներկայացնել վարչական ռեգիստրի վարման աշխատանքների իրականացման, տրամադրվող հավաստագրերի վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման և վարման վերաբերյալ առաջարկություններ.
2) ներկայացնել ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտում էկոհամակարգի ձևավորմանն ուղղված ծրագրերի մշակման վերաբերյալ առաջարկություններ.
3) ներկայացնել ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտը կարգավորող իրավական ակտերի, նորմատիվ տեխնիկական ակտերի և ստանդարտների բարեփոխման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկություններ.
4) մշակել բարձր տեխնոլոգիական ոլորտը խթանող էկոհամակարգի զարգացման վերաբերյալ առաջարկություններ.
5) մշակել ստարտափ գաղափարների և գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման, փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման և արտադրական ենթակառուցվածքների ստեղծման շղթայի ապահովման մեխանիզմներ.
6) Ներկայացնել առաջարկություն հայկական և արտերկրյա աքսելերատորների միջև կապերի զարգացման խթանման մեխանիզմների ստեղծման վերաբերյալ.
7) ներկայացնել ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտին վերաբերող սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակման վերաբերյալ առաջարկություններ.
8) ներկայացնել Հայաստանի բարձր տեխնոլոգիական ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման մեխանիզմների մշակման վերաբերյալ առաջարկություններ
9) ներկայացնել ՀՀ բարձր տեխնոլոգիական ոլորտը կարգավորող իրավական ակտերի, նորմատիվ տեխնիկական ակտերի և ստանդարտների բարեփոխման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկություններ.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ տնտեսագիության բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

(3.3.-րդ կետը փոփ. 27.02.20 գլխավոր քարտուղարի հր. 141-Ա)

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում

4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և որոշումների նախապատրաստման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: